

թիւնով անկախութեան համելու և ինքնուրպյն գեր խաղաղու, Խնչպէս էլ կուզէ մող լինի տեղագրութեան և հանգամանքներին ծանօթ Օդէնաթուը յարաբերութեան մէջ մտաւ Բալլիստայի հետ յարձակուեց վերագարձող պարսիկների վերան և մի կատարեալ յաղթութիւն տարաւ նորանց վերայ. Մինչև անգամ արքունի կանանցի մի մասը ընկաւ նորա ձեռքը, նոյն իսկ Տիգրոսնը մէկ թէ երկու անգամ պաշարեց: — Հաւանօրէն այս տեղ նոյնը տեղի ունեցաւ, ինչ որ յետոյ ևս պարսկական տէրութիւնը երկարատև արշաւանքների ծախքը չէր կարողանում հոգալ:

Այս արեւելեան տէրութիւնները չնայելով իւրենց գաւառների բնական հարստութեան, և արբունի գանձարաններում դիմուած հարստութեան, աշնու ամենայնիւ աշխարհագրական և պատմական պատճառների շնորհիւ ընդհանրապէս աղքատ են։ Մի մեծ և մշտական բանակ չունեին պարսիկները Հոռովանացւոց պէս։ Ժողովրդից հաւաքած ամբոխը պէտք է իրկին յետ տարու էր։

Ահա թէ ինչու համար բազմաթիւ յաղթական արշաւանքները մնում էին առանց տեսական հետեւանքի: Չի երևում, որ Ծապուհը տեսական տիրապետութիւններ արած լինի, մինչև անգամ Հայաստանը ինչպէս երևում է այդ միջոցներին կրկին անգամ՝ Հռովմայեցոց գերիշխանութեան տակ էր մտել: Վաղերիանոսը սակայն մնաց Ծապուհի ձեռքին և իրեն գերի մեռաւ: Դեռ ևս ցցց են տալիս մեզ բարձրագանգակ արձանները Պերսիս նահանգի ժայռերի վրայ քանդակուած, թերեւս նոյն իսկ Հռովմեական հպատակների ձեռքով: յաղթական արքայից արքային և գերի կայսեր: Եյս գեպքը յիշում է մինչև անգամ պարսկական աւանդութիւնը, որ առհասարակ Արտաշրի անմիջական յաջորդների մասին շատ քիչ սպատմական բան դիտե: Մի քանի բան, որ այդ աւանդութիւնը Ծապուհ Ա-ին է վերաբրում: Վերաբերում է իսկական Հարուհ Բ-ին:

Այս թագաւորը մեծամեծ շինութիւններ է աւ-  
րել։ Իրաւացի կերպով սորան են վերագրում այն  
մեծ ջրանցքները Սուլիանայում Շուշտերի մօտ,  
որոնք ոռողում են այդ երկիրը և նրան այնպահ  
պտղաբեր գարձնում։ Նոյն այդ երկրում նա հիմն-  
ել է Գունդ և — Ըափուր (Արարերէն՝ Զունդայի—  
Սարուր, ասորերէն՝ Բէթ—Ղապար)՝ քաղաքը, որ  
երբեմն երբեմն արքայանիստ նոյն դերն է խաղա-  
ցել։ Ինչ որ Աքեմենեանց ժամանակի դրան մեր-

ձակայ Ծօշը, որ Բարելոնից յետոյ երկրորդ քաղաք-  
քըն էր, ինչպէս որ սա Տիգրանից յետոյ երկրորդն  
էր, Ար Շապուհը ոչ - Երանեան երկրների ևս տիրել  
էր, այդ վերև յիշեցինք: Իրաւամբ սակայն կայսե-  
րաց պատմագիրները ( Scriptores historiae Augustae )  
Բակտրիացիներին համարում են այդ ժամանակ  
անկախ և յաճախ պարսիկներին թշնամի մի ազգ:  
Նոյնը վերաբերում է և Կագուլիացիներին, ( Pollio,  
Valeianus 1 ) այսինքն այժմեան Գիլանի Գիլամացի  
կոչուած լեռնական ցեղերը, որոնց Սասանեաները  
երբէք չնուածեցին:

Ըապուհի տէրութեան հէնց սկզբները երեան  
եկաւ Մանին, Մանիքութեան հիմնագիրը, որ գա-  
ւանական տեսակէտով Գնոստիկեաններից ամենից  
հետևողականը և պատմաբանօրէն ամենից նշանաւոր  
աղանդն էր Այս հոգեպաշտ աղանդաւորների դէմ  
պարսիկ մոգերը երկար դարեր նոյնչափ եռանդով  
մաքառ եցին, որչափ զուտ քրիստոնէական զաւա-  
նութիւնների բնգագէմ:

Ըապուհի վերջին օրերին մեծ յեղափոխութիւն տեղի ունեցաւ Հռովմէական արևելքի դորձերի մէջ։ Օգէնսամի այրուն, Զէնոբիային ինչպէս երեսում է Ըապուհը Աւրելիանոս կայսեր ընդգէմ աջակցեց, ասկայն ոչ տոկուն կերպով Երբ կայսրը Պալմիրան առաւ 273 թ. և Հռովմի իշխանութիւնը կրկին այդ երկրներում կանգնեց, երեք արդէն Ըապուհը մեռած էր։

1182 *Journal of Clinical Endocrinology*

Ժարգի՛ Ա. Քարամեան.



S b 'b 2 U 'b f 1.

G H L L B R H S.

Ա խ երանի այս միզապատ  
Խոր անդրտնիցն ահոելի  
Դուքս թռչելու ես մի ազատ  
Ինձ Շանապարհ գտնէի:

Մշտականաշ սիրուն զգեստով  
Ահա այնտեղ ըըլուրներ.

Ա՞ս, թէ հուժկու ես թեւերով  
Սըլանայի դէսի վեր:

Մի երկնային անդոքը ովթեան  
Հսում եմ արդ նըագնեց,  
Քաղցը զուրմինը անուշ զարնան  
Բերում են ինձ մեղծ հովեր:

## I. Sehnsucht.

Սաղարթի մէջ գնդաժպիտ  
Ռուկի պտուղներ շղոշողուն,  
Եւ ծաղիկներ մշտափթիթ  
Իմ՝ հոգին են կախարդում:

Այս, ի՞նչ շքնար պիտի լիսի  
Անվերջ լուսոյ այն աշխարհ,  
Եւ ի՞նչ անուշ ու սրանչելի  
Այնուն օռը կենարար:

Բայց հեղեղատն իմ՝ առաջին  
Մոնչում է զայրոյթով.  
Նորա ալիքը մոլեզին  
Գատում են ինձ սարսափուլ:

Ահա նասակն այսուեղ կանգնած,  
Բայց, ախ, չըկայ նասակար . . .  
Յառաջ անահ ու անկասկած —  
Նա շունչ կ'առնէ քեզ համար:

Եղկ հաստա դու աներկմիտ,  
Քաջ դու սիրտ ան ու հոգի —  
Հրաշքնվ կ'բացովի քո առաջիդ  
Սիրուն աշխարհն հրաշալի:

#### Յ. ՅՈՎԱՆՆԻՆԻՍՅԱՆ



Առաժներ ՑՐԱՓԻԶՈՒՆԻ ԴԻՒՂԻՑՈՅ ԲԱՐԲԱՐՈՒՆ:

Ես օր թափելը (ՃԵԿ) կընէ. օշ ՏԵյս կընէ, օշ Թ. յա:  
Հմն ինչ բարակնալով կոտրիկու, մաշու հաստընալով:  
Հմն մաշուն իրն ափթէմիով շափ կանգնոյ հա-  
սար զնափած | քնթան տալ չին:

Հմն դարբա (անգամ) տէրան (Քահանայն) քաթա  
ուսիթ չի:

Հմն մաշու դարբած տեղոյ խան (Քնսան, պանդոկ  
չնիւ չին:

Ես մաշու քով նիստ, օր քեզիկի լացնէ կու:

Հա ճառը օր շկանոմ կտրի, պազմիմ, գլխուս զնիմիտի ։

Հա աւուր թօն՝ արօն մէշիր էգուն վաղուան :

Երկնքը իւսիժ կուտին, մեսիմ էւ տօնիր չի՞ն:

Թաթաւէն՝ փախաւ, ծոոց (տիղմ) ընկաւ:

Թնկնիւնին (ԺԴԱ) ատին. — Քինթդ սրյու. — աղքատ  
իմ, ասաց:

Թօփալ տէրան էկաւ, ցոնիր հացն էլ ուաս էղիր:

1. Կանեփէ գործած կտութ ամառ ճամանակ ջրի մօտ  
կը տարածնեն, շարունակ չուր կը սրանն վերան, որով 5-10  
աւուր մէջ կապիտակի: 2. Թիտի զնեմ: 3. Թոյլ տալ: 4. Խո-  
չը ու համեստով անգրիւ:

Թօլէն էլած ունի, թօլէն և թընէ կու:  
Իծուն կոնակը օր քերուի, կեշույ նուիի փէտին  
ցոտի կու:

Ի՞ր լիքունը 2 առնիմ, էշում ուրիշը մէսէլ ասիմ:  
Խշաք խնձանը կարգուեցաւ, խելքոյն տղաքը հա-  
սու:

Խծիկի պիտու չնդած սուրբը լու ընխմանի:  
Խրիւտուն բօնը թողու մի էգուն:  
Լիզուն օւկոր չունի օր ծակէ, հա խորաթէ (Խոսէ):  
Լու ի մը հօմար, Խօրդանը (Վերմակ) վառն:  
Խաղ շամ գիտիմ, ծէն չունիմ:

Խուլարին էմն օր զատիկ է:

Խելամա մաշզու հիտ քար կրէ, խելարին հիտ, փելաւ  
ուտի մի:

Խլարը հայսնից զնաց, հսա տունը միր տունէն պէտք  
է, ասաց:

Խելուուն հացը խելաւասին փոյն է:  
Խուփը գլրեցաւ, ծափը 5 էգուու:  
Խունկը քեզ սլի, խաչը (Խկմեցի) հուեցնել մի:

Ս. Հայկունի.



Ն Ե Խ Ա Բ Ի Ե Բ •

#### ԿՈՐԱՎՈ ԱԽ ՄԱԽ-ԵՑՈՒԱԽՈ ՀԵՅԵՐ.

(Ցրափիզօնի հայ-մահմտական գիլերը, նրանց ա-  
ւանդութիւնները եւ սովորութիւնները).

#### Ս Ե Խ Գ Ե Տ Ա Ց Ի Ք Ի Ք.

(Եարունակութիւն)

Սեւ գետացոց հայ մահմէտականներէ  
առնուած է հետեւեալ պարի երգն, որ աշըդ  
Վարդյան ասած է:

Հօրօր ։ Պարունը գայ, կուկուն ։ կու կօնչէ,  
կօնչէ, կուկուս կօնչէ, քու թօնը թօն չէ.  
Օտքս փուշ պատեցաւ, 5 սիյսու և կու խօնչէ,  
կօնչէ, կուկուս, կօնչէ, քու թօնը թօն չէ,

1. Մաշմուք (շագանակ) պտղին դրսի, կանաչ եւ  
փշոր կնդեն: 2. Քառակուսի թիթեղէ շինած փորքիկ ա-  
նոթ, ձկնիտ կը լեցնէ, ծրագ կը վառեն: 5. Պոտէկ, կա-  
նապ անօթ, որոյ մէջ կերակուր կնդեն:

\* 8ես. Արարատ համար Հ. եր. 59 - 45:

1. Երրոր: 2. Կկու, աղաւնից փոքր, սեաւ գորշագոյն թրո-  
շոնք, որ գիւղացիք պահ կանչեցն մեծ նշանակութիւն կո-  
տան, առաւտուեան շոտ անկողնից բարձրանալու եւ մի բան  
ուսիթու են որպէս զի անօթի փորանց կկուի ծայնը չլաւն,  
գոնէ երեց առաւտ մի բան կերած լինելով լսելու են որ  
կկուն ընտառ (յաղթած) վիմն:

3. Պատիւ ըստ հայստանցոց բարձր տեղից բան  
մի ընկնիւ իսկ ըստ Ցրափիզօնի գիլացոց ծայրը սուր  
մի բան՝ որպէս փուշ ասեղ եւ մախաթ մի բան  
մէջ խօրուիւ: 4. Սիրոտ: